



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 22 » Մայիսի 2023թ.

N 26-ՆԿ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ,
ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻՆ ԿԻՑ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՍՍԵՑՄԱՆ
ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 8-րդ կետերով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մարտի 17-ի N 23-Ա հրամանի Հավելված 3-ի 2-րդ կետը, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի մարտի 20-ի N 183-Ն հրամանով հաստատված ֆիզիկական անձանց անհատական հաշվի քաղվածքի աշխատանքային տեղեկությունները, Սամվել Սնիսյանի 2023 թվականի մարտի 7-ի, Միքայել Հովհաննիսյանի մարտի 15-ի և Խաչիկ Ավետիսյանի մարտի 17-ի դիմումները՝ համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցության դադարեցման մասին

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կասեցնել քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված կազմակերպությունների համապատասխան գործունեության տեսակի, ենթատեսակների լիցենզիաների և ներդիրների գործողությունները, մասնավորապես՝

1) «Մոնոլիտիկ քնսթրաքշնս» (ՀՎՀՀ՝ 00099583) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի N16302 լիցենզիայի և լիցենզիային կից N 16302-01 ներդիրի գործողությունը 2021 թվականի հունվարի 15-ից,

2) «Արխի գրուպ» (ՀՎՀՀ՝ 00234068) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի N 17991 լիցենզիայի և լիցենզիային կից N 17991-01 ներդիրի գործողությունը 2023 թվականի մարտի 7-ից,

3) «Ակա-շին» (ՀՎՀՀ՝ 00221858) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման տրանսպորտային ոլորտի N 18140 լիցենզիայի և լիցենզիային կից N 18140-02 ներդիրի գործողությունը 2023 թվականի հունվարի 18-ից:

2. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված կազմակերպությունների համապատասխան գործունեության տեսակների ներդիրների գործողությունների կասեցումը համարել վերացած 2023 թվականի մարտի 17-ից, մասնավորապես՝

1) 2014 թվականի մարտի 3-ի N 70 հրամանով «Կոփ» (ՀՎՀՀ՝ 08208785) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության էներգետիկ ոլորտի N 15512-04 ներդիրի գործողությունը:

2) 2022 թվականի հունիսի 2-ի N 32-Ա հրամանով «Ատ քոմփանի» (ՀՎՀՀ՝ 01034995) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման տրանսպորտային ոլորտի N 18356-02 ներդիրի գործողությունը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

1) ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3/22/2023

X 

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ